ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «ԱՐՑԱԽԲԱՆԿ», «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՎ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Ընդունել «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով զեկուցող՝ ՍԴ անդամ Վ. Հովհաննիսյանի՝ գործին առնչվող նոր ստացված և ձեռք բերված նյութերի ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով գործի դատաքննությունը հետաձգելու վերաբերյալ առաջարկությունը, գործի դատաքննությունը հետաձգել և այն սկսել 2011 թվականի հուլիսի 12-ին, ժամը 11.00-ին։

2. Այդ կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 22.03.2011թ. ՍԴԱՈ-22 աշխատակարգային որոշումը՝ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 հունիսի 2011 թվականի
ՍԴԱՈ-51